

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՔՆ-ԲԸԱՇՁԲ-15/5**

ք. Երևան

28.10.2015 թ.

«Քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Է. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արա և այծենիկ» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ամիրխանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզդպրոցի կառուցման աշխատանքները** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են «Օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը (առկա ֆինանսական միջոցների սահմաններում) սահմանվում է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց օրվանից հաշված մինչև 25.12.2015թ. ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ «Օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը՝ դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերութունների անհատուց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն

պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇխԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

### 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆՆ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 500000000 (Հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որից 83333333 (Ութսուներեք միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: 2015 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում նախատեսված գումարը կազմում է 223269300 (Երկու հարյուր քսաներեք միլիոն երկու հարյուր վաթսուինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամ /այսուհետ պայմանագրային գումար/: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.1.1 Մինչև 15.12.2015թ. պայմանագրային գումարի չիրացված մասը ամբողջությամբ՝ 2015թ. դեկտեմբեր ամսվա երրորդ շաբաթվա ընթացքում համապատասխան կանխավճարի ապահովում ներկայացնելուց հետո, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 500000000 (Հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2015թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

- ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.
- ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.
- ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.
- ՎԳՏ - ծավալաբերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված՝ օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆԿԱՂԹԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության անկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պատվիրատու

«Քաղաքաշինության նախարարություն»  
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,  
կառավարական տուն 3

«Ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչության»  
Հ/Կ 900011002756, ՀՎՀՀ 02553861


### Կապալառու

«Արա և Այծեմնիկ» ԲԲԸ,  
ք. Էջմիածին, Նար-Դուսի 3,  
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ,  
«Էջմիածին» մասնաճյուղ  
Հ/Կ 163118009113,

ՀՎՀՀ 04704351



Տնօրեն Ա. Ամիրխանյան (ստորագրություն)



Հավելված թիվ 1  
28.10.2015 թ. կնքված աշխատանքների կատարման  
թիվ ԲՆ-ԲԸԱՇՁԲ-15/5 գնման պայմանագրի

### ՇԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱԿԱՇԻՎ

#### ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՄԱՐԶԴԴՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Գնացուցակ անվանումը և համարը	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակ	Միավորի արժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6
		<i>Ջրամատակարարման և կոյուղու ներքին համակարգ</i>			
		<b>1.Ջրամատակարարման ներքին համակարգ</b>			
1	E16-41	Ջրամատակարարման Φ16 մետալոպլաստե խողովակների անցկացում սառը ջրի համար	զմ	15.0	0.72
2	E16-43	Ջրամատակարարման Φ25 մետալոպլաստե խողովակների անցկացում սառը ջրի համար	զմ	13.5	0.78
3	E16-42	Ջրամատակարարման Φ32 մետալոպլաստե խողովակների անցկացում սառը ջրի համար	զմ	33	0.91
4	E16-42	Ջրամատակարարման Φ40 մետալոպլաստե խողովակների անցկացում սառը ջրի համար	զմ	10	1.05
5	E16-41	Ջրամատակարարման Φ16 մետալոպլաստե խողովակների անցկացում տաք ջրի համար	զմ	6	0.72
6	E16-43	Ջրամատակարարման Φ25 մետալոպլաստե խողովակների անցկացում տաք ջրի համար	զմ	12.5	1.02
7	E16-42	Ջրամատակարարման Φ32 մետալոպլաստե խողովակների անցկացում տաք ջրի համար	զմ	16	1.29
8	E16-42	Ջրամատակարարման Φ40 մետալոպլաստե խողովակների անցկացում տաք ջրի համար	զմ	10.5	1.81
9	E16-134	Փական Φ15	հատ	7	3.36
10	E16-134	Փական Φ25	հատ	4	4.28
11	E16-134	Փական Φ32	հատ	3	7.10

12	E16-134	Փական Փ40	հատ	1	9.70
13	Ի.Տ.	Լվացարանի ծորակ Փ15	հատ	5	1.52
14	E17-38	Ցնցուղարանի խառնիչով ցնցուղի տեղադրում	հատ	12	9.88
15	Ի.Տ.	Մինչև Փ15 ձևավոր լատունե միացման մասեր	հատ	22	0.54
16	Ի.Տ.	Մինչև Փ25 ձևավոր լատունե միացման մասեր	հատ	25	1.26
17	Ի.Տ.	Մինչև Փ32 ձևավոր լատունե միացման մասեր	հատ	25	3.05
18	Ի.Տ.	Մինչև Փ40 ձևավոր լատունե միացման մասեր	հատ	12	3.70
19	Ի.Տ.	Ճկուն միացման շլանգներ	հատ	9	0.76
20	Շուկա	Մինչև Փ200 անցքերի լցում էլաստիկ կյութով	խմ	0.2	10.23
21	E16-219	Համակարգի փորձարկում	100զմ	1.105	7.28
22	E1-961	III կարգի հողի մշակում ձեռքով	խմ	12.5	2.15
23	E1-968	II-րդ կարգի հողի ետլիցք ձեռքով	խմ	10.3	0.90
24	E23-1	Ավազե փռոզ-հարթեցնող շերտի պատրաստում	խմ	6.2	3.50
25	C310-5	Շին.աղբի և հողի հավաքում, բարձում ավտոինքնաթափերի վրա և արտահանում ճկմ	տն	11.8	3.00
		<b>II. Կոյուղու ներքին համակարգ</b>			
26	E1-961	III կարգի հողի մշակում ձեռքով	խմ	16	2.15
27	E1-968	II-րդ կարգի հողի ետլիցք ձեռքով	խմ	12.5	0.90
28	E23-1	Ավազե փռոզ-հարթեցնող շերտի պատրաստում	խմ	6.1	3.50
29	E46-53	Մինչև Փ500 անցքերի բացում հիմքերում	100հատ	0.005	256.34
30	Շուկա	Մինչև Փ500 անցքերի լցում էլաստիկ կյութով	խմ	0.5	10.23
31	E16-33	Փ50 կոյուղու պլաստմասայե խողովակների անցկացում	զմ	7	1.22
32	E16-34	Փ100 կոյուղու պլաստմասայե խողովակների անցկացում	զմ	33	1.68

33	E16-34	Փ150 կոյուղու պլասմասայե խողովակների անցկացում	զմ	25.5	2.13
34	E17-28	Կերամիկական լվացարանի տեղադրում ոտնակով	կտ	5	15.52
35	E17-56	Ջուզարանակոնք կերամիկական	կտ	4	22.68
36	E17-36	Փ50 կոյուղու հոսակի տեղադրում	հատ	1	1.80
37	E17-37	Փ100 կոյուղու հոսակի տեղադրում	հատ	2	4.11
38	Ի.Տ.	Փ100 մաքրիչ	հատ	1	0.39
39	Ի.Տ.	Փ50 պլասմասե ձևավոր միացման մասեր	հատ	14	0.28
40	Ի.Տ.	Սիֆոններ լվացարանների համար	հատ	4	0.84
41	Ի.Տ.	Փ100 պլասմասե ձևավոր միացման մասեր	հատ	19	0.64
42	Ի.Տ.	Փ150 պլասմասե ձևավոր միացման մասեր	հատ	7	1.12
43	C310-5	Շինարդի և հողի հավաքում, բարձում ավտոինքնաթափերի վրա և արտահանում 6կմ	տն	14,8	3.85
		<b>III.Ախտահանիչ վանանների սարքավորումներ</b>			
44	E17-32	Ախտահանիչ վանանների տեղադրում	կտ	2	21.43
45	E16-43	Ջրամառակարարման Փ20 մետալպլաստե խողովակների անցկացում տաք ջրի համար	զմ	33	0.81
46	Ի.Տ.	Մինչև Փ20 ձևավոր լատունե միացման մասեր	հատ	18	1.24
47	Շուկա	Քլորի կարգադրիչի տեղադրում	հատ	1	74.89
48	E17-96	Ջրատարացուցիչի տեղադրում	հատ	1	88.53
49	E18-165	Շրջանառու պոմպի տեղադրում	հատ	1	81.17
		<b>IV.Ջրավազանի սարքավորումներ</b>			
1	Շուկա	Շրջապտույտի պոմպ 15լսմ/ժամ	հատ	3	186.34
2	Շուկա	Ավազի ֆիլտր	հատ	3	315.20

3	Շուկա	Կվարցային ավազ	կգ	1525	0.19
4	Շուկա	Պրոթեկտոր	հատ	12	36.95
5	Շուկա	Տրանֆորմատոր 300վտ	հատ	12	20.85
6	Շուկա	Մակարդակի կարգավորիչ/սկիմներ/	հատ	12	31.58
7	Շուկա	Ֆարսունկա	հատ	24	6.63
8	Շուկա	Դատարկող հոսակ	հատ	2	15.73
9	Շուկա	Էլեկտրոտաքացուցիչ	հատ	3	170.23
10	Շուկա	Լատունե խլացուցիչ	հատ	6	14.53
11	Շուկա	Թերմոստատ 0-40C	հատ	1	43.9
12	Շուկա	Արգելակ PUK 50*1/2	հատ	1	3.16
13	Շուկա	Աստիճան 4աստ. լայն	հատ	4	66.33
14	Շուկա	Թաղանթ 2,05	քմ	358.3	7.45
15	Շուկա	Թաղանթ 1,65	քմ	82.5	7.45
16	Շուկա	Գեոտեքստիլ	քմ	411	2.02
17	Շուկա	Մետաղական թերթեր թաղանթով	հատ	2.22	46.36
18	Շուկա	Ինքնապտուտակվող մեխ	հատ	370	1.14
19	Շուկա	Սոսինձ թաղանթի համար	հատ	4	10.42
20	Շուկա	Ավտոչափավորիչ 2 վահանակով	հատ	1	972.77
21	Շուկա	Չափավորիչ պոմպ	հատ	3	113.7
22	Ի.Տ.	Անկյունակ Փ50	հատ	50	0.44
23	Ի.Տ.	Եռաբախշիչ Փ50	հատ	12	0.88
24	E16-55	Փ50խողովակների անցկացում	զմ	100	1.96
25	Ի.Տ.	Անկյունակ Փ63	հատ	30	0.79
26	Ի.Տ.	Եռաբախշիչ Փ63	հատ	12	0.98
27	E16-56	Փ63խողովակների անցկացում	զմ	150	2.65
28	Ի.Տ.	Անկյունակ Փ75	հատ	70	1.26
29	Ի.Տ.	Եռաբախշիչ Փ75	հատ	6	2.34

30	E16-56	Փ75խողովակների անցկացում	զմ	210	3.15
31	Ի.Տ.	Փական Փ63	հատ	2	4.21
32	Ի.Տ.	Փական Փ75	հատ	6	3.71
33	Ի.Տ.	Անկյունակ Փ90	հատ	8	2.02
34	Ի.Տ.	Եռաբախշիչ Փ90	հատ	8	3.1
35	Շուկա	Արգելակ PUK 63*50	հատ	24	0.35
36	Շուկա	Արգելակ PUK 75*63	հատ	12	0.76
37	Շուկա	Արգելակ PUK 90*75	հատ	16	1.26
38	Շուկա	Արգելակ PUK 125*90	հատ	8	1.83
39	Ի.Տ.	Եռաբախշիչ Փ125	հատ	4	7.45
40	E16-57	Փ90խողովակների անցկացում	զմ	4	4.09
41	E16-60	Փ125խողովակների անցկացում	զմ	6	7.9
42	Շուկա	Լատունե խլացուցիչ Փ75*21/2	հատ	9	4.42
43	Շուկա	Լատունե խլացուցիչ Փ63-50*2	հատ	14	0.69
44	Շուկա	Սոսինձ	հատ	10	4.74

**լողավազանի շենքի կառուցում Համաշինական աշխատանքներ**

<b>1.Հողային աշխատանքներ</b>						
1	E1-1130	III-րդ կարգի հողի հարթեցում բուլդոզերով 96կվտ, (130 ձ.ու.)հզորությամբ	100քմ	160.0	1.3	
2	E1-57	III-րդ կարգի հողի քանդում երսկավատորով, 0,5խմ շերտիով կողայացումով	1000խմ	0.42	526.02	
3	E1-961	Պ=1,1	III-րդ կարգի հողի լրամշակում ձեռքով մինչև 2մ	խմ	22.5	2.36
4	E1-175	II կարգի հողի բարձում ա/ի վրա լիցքի համար	1000խմ	0.105	500.02	
5	c310-15	Հողի բերում 15կմ-ից	տն	189	2.85	
5	E1-1130	III-րդ կարգի հողի հարթեցում լիցքում բուլդոզերով 96կվտ, (130 ձ.ու.)հզորությամբ	100քմ	4.27	1.28	
6	E1-968	II-րդ կարգի հողի ետլիցք ձեռքով	խմ	20.5	0.9	

7	E1-1150	Հողի խտացում 73սմ	100խմ	3.12	13.58
<b>2.Հիմքեր</b>					
8	E11-6	Խճե նախապատրաստական շերտ հիմքերի տակ	խմ	8.2	10.5
9	E6-1	Հիմքերի պատրաստման համար նախապատրաստական շերտ B10 բետոնով	խմ	5.1	30.1
10	E6-5	B25բետոնով է/բ կետային հիմքի պատրաստում	խմ	36	58.09
12	E6-1	Հիմքերի պատրաստման համար նախապատրաստվող շերտ B15 բետոնով	խմ	135.0	30.3
13	E6-22	Ե/բ ժապավենավոր հիմքերի պատրաստում B 25 բետոնով	խմ	77.0	49.7
14	Ի.Տ.	Ամրան A-500c Փ16	տն	3.176	402.52
15	Ի.Տ.	Ամրան A1-c	տն	2.364	411.8
16	Ի.Տ.	Ամրան A-500c Փ12	տն	0.377	396.76
17	E8-27	Կողային բիտումային կրկնակի քսումով ջրամեկուսացում	քմ	232.0	0.9
18	E11-6	Հատակների և աստիճանների տակ խճե հենքի պատրաստում	խմ	25.6	10.5
19	E6-1	Հատակների և աստիճ. պատրաստման համար նախապատրաստական շերտ B15 բետոնով	խմ	58.8	30.1
20	Ի.Տ.	Ամրան A1-c	տն	1.137	411.8
21	E8-13	Հորիզոնական ջրամեկուսացում ցեմ. շաղախով հերոնկ ապակիով	քմ	182.0	1.7
<b>3.Սյուներ</b>					
22	E6-133	Ե/բ սյան պատրաստում B25 բետոնով	խմ	57.0	85.2
23	Ի.Տ.	Ամրան A-500c	տն	7.415	391.84
24	Ի.Տ.	Ամրան A1-c	տն	1.372	411.8
25	E6-83	Մետաղական ներդիր մասերի տեղադրում մինչև 4կգ	տն	0.214	819.970
<b>4.Մածկեր 3,22 եիշում</b>					
26	E6-161	Ե/բ միաձույլ հեծանների և պարզունակների պատրաստում B25 բետոնով	խմ	43.84	77.1

27	Ի.Տ.	Ամրան A-500c	տն	3.97	391.84
28	Ի.Տ.	Ամրան A1-c	տն	1.758	411.8
29	E6-83	Մետաղական ներդիր մասերի տեղադրում մինչև 4կգ	տն	0.202	720.760
30	E7-490	Ծածկի կլորանցքավոր սալերի տեղադրում մինչև 6մ երկ.	հատ	21	11.81
31	Ի.Տ.	Ծածկի կլորանցքավոր սալերի արժեք, մինչև 6,3մ երկ.	քմ	168.5	9.49
32	E6-179	Հավաքովի ծածկերի միաձույլ լրացումների պատրաստում B25 ծանր բետոնով	խմ	4.16	87.76
33	E6-182	Միաձույլ ծածկերի պատրաստում B25 ծանր բետոնով	խմ	0.78	76.32
		5.Ծածկեր 6,52 կիշում			
34	E6-161	Ե/բ միաձույլ հեծանների և պարզունակների պատրաստում B25 բետոնով	խմ	26.28	77.1
35	Ի.Տ.	Ամրան A-500c	տն	2.885	391.84
36	Ի.Տ.	Ամրան A1-c	տն	1.219	410.8
37	E7-490	Ծածկի կլորանցքավոր սալերի տեղադրում մինչև 6մ երկ.	հատ	5	11.81
38	Ի.Տ.	Ծածկի կլորանցքավոր սալերի արժեք, մինչև 6,3մ երկ.	քմ	34.2	9.49
39	E6-83	Մետաղական ներդիր մասերի տեղադրում մինչև 4կգ	տն	0.427	720.760
40	E6-179	Հավաքովի ծածկերի միաձույլ լրացումների պատրաստում B25 ծանր բետոնով	խմ	0.93	87.76
41	E9-69	Մետաղական քառ. խողովակներից ֆերմաների մոնտաժ	տն	13.458	50.35
42	Ի.Տ.	Մետաղական խողովակների արժեք 200x160x7	զմ	111.2	9.2
43	Ի.Տ.	Մետաղական խողովակների արժեք 160x160x7	զմ	108	7.36
44	Ի.Տ.	Մետաղական խողովակների արժեք 140x140x6	զմ	186	6.3
44	Ի.Տ.	Մետաղական անկյունակի արժեք 100x100x6,5	զմ	27.8	5.36
45	Ի.Տ.	Մետաղական թիթեղ10մմ	տն	0.657	478.17

46	E9-38	Մետաղական կապերի մուտած	տն	10.512	65.37
47	Ի.Տ.	Մետաղական շվեյեր թիվ 20	գմ	241.4	8.63
	Ի.Տ.	Մետաղական շվեյեր թիվ 18	գմ	24.4	7.67
	Ի.Տ.	Մետաղական շվեյերի արժեք 160x80x5	գմ	356.4	6.78
	Ի.Տ.	Մետաղական խողովակների արժեք 100x100x4	գմ	11.4	5.22
	Ի.Տ.	Մետաղական թիթեղ10մմ	տն	0.039	478.17
	E6-83	Մետաղական ներդիր մասերի տեղադրում մինչև 4կգ	տն	0.203	720.760
48	E15-613	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում	100քմ	5.64	62.025
		<b>6.Պատեր</b>			
49	E8-163	Կանոնավոր կտրվածքի բարից պատի շար	խմ	343.0	18.3
50	E8-59	Շարի ամրանավորում Փ6 ամրանային ցանցերով	տն	0.41	470.03
51	E26-28	Փրփրապլաստով պատերի ջերմամեկուսացում	խմ	40.1	16.797
52	E6-170	Ե/բ միաձույլ բարավորների պատրաստում B20 բետոնով	խմ	0.8	68.34
53	Ի.Տ.	Ամրան A-500c	տն	0.042	391.84
54	Ի.Տ.	Ամրան A1-c	տն	0.026	411.8
55	E6-168	Ե/բ միաձույլ գոտիների պատրաստում B20 ծանր բետոնով	խմ	5.8	50.87
56	Ի.Տ.	Ամրան A-500c	տն	0.287	391.84
57	Ի.Տ.	Ամրան A1-c	տն	0.075	411.8
		<b>7.Տանիք</b>			
58	E9-38	Մետաղական կավարամածի մուտած	տն	8.488	65.37
60	Ի.Տ.	Մետաղական խողովակների արժեք 100x100x4	գմ	189.6	5.220
61	Ի.Տ.	Մետաղական խողովակների արժեք 60x30x2	գմ	655.2	1.120
62	Ի.Տ.	Մետաղական խողովակների արժեք 60x40x3	գմ	1140	3.050

64	E12-288-1	Խարանով ջերամեկուսիչ շերտի պատրաստում	խմ	9.20	6.520
65	E12-404	Ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից տանիքի պատրաստում 0,6մմ և ավելի հաստ թիթեղից	քմ	913	7.390
66	P8-191	Ջրահեռացման խողովակների կախում ց/թիթեղից 0,6մմ հաստ, ներառյալ ջրիս ձագարները մինչև 7,5մ	կտ	5	32.15
67	E10-71	Ձեղնապատուհանների պատրաստում շերտափեղկերով	հատ	3	35.5
68	E10-32 Շտ.	Տախտակամածի պատրաստում 3սմ հաստ. տախտակներից ջրհորդանի տակ	քմ	326.7	5.0
69	E12-278	Ջրհորդանի և հոսանցի ծածկույթի պատում ց/թիթեղից 0,6 մմ հաստությամբ(առանց տախտակամածի)	զմ	50.9	4.39
70	Ի.Տ.	Ջյունապաշտպանիչների տեղադրում	զմ	57.30	5.28
71	E15-613	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում	100քմ	2.12	62.025
72	E26-43	Փրփրապլաստով ծածկի ջերամեկուսացում	խմ	90.6	26.418
73	E26-33	10սմ հաստ. ապակեբամբակ ֆոլգայով ջերամեկուսացում	խմ	181.2	17.128
74	E12-280	ցինկ. 0,6մմ թիթեղով տանիքի փոքր ծածկերի պատր.	քմ	75.8	3.964
	E12-289	Գոլորշիամեկուսիչ շերտի պատրաստում	100քմ	9.06	160.011
	Ի.Տ.	Ցանց ուսրիցա	քմ	906	0.409
	E12-279	Կախովի ջրհորդանների տեղադրում	100զմ	0.463	163.952
		<b>8.Միջնապատեր</b>			
74	E8-140	Պեմզաբետոնե միջնապատերի պատրաստում 200x200x400մմ բլոկներից	խմ	28.08	43.21
76	E8-59	Շարի ամրանավորում Փ12 A-500c ամրանային ցանցերով	տն	0.215	454.99
77	E8-140	Պեմզաբետոնե միջնապատերի պատրաստում 200x400x100մմ բլոկներից	խմ	18.3	23.4
78	E8-59	Շարի ամրանավորում Փ3Bp I ամրանային ցանցերով	տն	0.019	652.74
71	E6-83 Շտ.	Միջնապատերի ամրացման դետալների մոնտաժ անկյունակներից	տն	0.065	629.26
79	E6-170	Միջնապատերի բարավորների պատրաստում B20 մանր բետոնից	խմ	1.28	68.34

80	Ի.Տ.	Ամրան A-500c	տն	0.078	391.84
81	Ի.Տ.	Ամրան A1-c	տն	0.02	411.8
18	P6-23	Գիպակարտոնե սալիկներով միջնապատերի պատրաստում	քմ	18	12.6
		<b>9.Ա-5 ներքին աստիճանների պատրաստում</b>			
82	E6-173	B20 բետոնով է/բ աստիճանների պատրաստում	խմ	3	51.34
83	E6-5	Աստիճանների հիմքի պատրաստում B12,5 բետոնով	խմ	3	44.5
84	Ի.Տ.	Ամրան A-500c	տն	0.495	391.84
85	Ի.Տ.	Ամրան A-1c	տն	0.0886	411.8
		<b>10.Ա Ա-7 աստիճանների պատրաստում</b>			
86	E6-173	B15 բետոնով է/բ աստիճանների պատրաստում	խմ	1.0	51.2
87	E9-46	Մետաղական աստիճանների թեք հեծաններ	տն	0.493	120.65
88	Ի.Տ.	Ամրան A-500c	տն	0.01	390.84
89	Ի.Տ.	18 համարի մետաղական շվեկեր	զմ	18	9.54
90	Ի.Տ.	Անկյունակներ 50x50x4	զմ	14.4	1.53
91	Ի.Տ.	Անկյունակներ 80x35x2	զմ	61.92	2.74
92	Ի.Տ.	Մետաղական թիթեղ10մմ	տն	0.0094	478.17
		<b>11.Բացվածքներ</b>			
93	Ի.Տ.	Մետալոպլաստե բացվող պատուհանի բլոկ՝ սպիտակ 60մմ հաստ. ապակեփաթեթով 4+4մմ, տեղական արտադրության պրոֆիլ 4 խցիկով	քմ	57.72	20.58
94	Ի.Տ.	Մետալոպլաստե չբացվող պատուհանի բլոկ՝ սպիտակ 60մմ հաստ. ապակեփաթեթով 4+4մմ, տեղական արտադրության պրոֆիլ 4 խցիկով	քմ	183.45	15.08
95	Ի.Տ.	Ալյումինե արտաքին դռների տեղադրում	քմ	15.63	32.63
96	Ի.Տ.	Ալյումինե ներքին դռների տեղադրում	քմ	27.72	30.78
97	Ի.Տ.	Մետալոպլաստե ներքին դռների տեղադրում	քմ	24	30.51

	Ի.Տ.	Մետալոպլաստե միջևորմների սեղադրում	քմ	17.6	18.25
		<b>13.Ներքին հարդարում</b>			
115	E15-250-1	Բարձրորակ գաջե սվաղ պատերին	100քմ	4.36	199.14
116	E15-251-1	Գաջե սվաղ առաստաղին	100քմ	0.583	212.408
117	E15-277-1	Թեք մասերի գաջե սվաղ	քմ	111	3.28
118	E15-258	Ցեմ.ավազե բարձրորակ սվաղ պատերին	քմ	990.7	2.44
119	P14-244	Պատերի և առաստաղի պատում ձեփամածիկով	100քմ	7.496	34.5
120	E15-82 շուկա	Պատերի երեսպատում հախճապալե սալիկներով 20x30սմ բարձր որակի	քմ	306.5	5.37
	E15-77	Աստիճանների երեսպատում 30սմ հաստ. Բազալտե սալերով	100քմ	0.28	768.69
121	E10-64	Պլամասե գունավոր թերթիկներից կախովի առաստաղի պատրաստում	քմ	747.8	3.14
122	E15-660	Լատեքսային ներկով ներկում ներքին պատերին	100քմ	5.4	126.89
	E15-502	Մոսնձաներկով ներկում ներքին պատերին և առաստաղին	100քմ	7.857	37.45
123	E10-64	Պլամասե թերթիկներից կախովի առաստաղի պատրաստում	քմ	157.2	5.33
124	ՄՊԸ „Հախվերոյան շին.„	Այլումինե բազրիքների պատրաստում	գմ	12.8	23.68
125	E15-69	Փայլեցված բազալտով թասակների պատրաստում 5սմ հաստ.	քմ	37	37.33
126	E6-125	Լողավազանի առվակների պատրաստում B20 բետոնով	խմ	2.6	85.469
	P3-41	Մետաղական ցանցով առվակների ծածկում	տն	0.355	587.898
129	P13-131	Կերամոգրանիտե սալերով երեսպատում	քմ	15.2	7.3
118	E15-258	Ցեմ.ավազե բարձրորակ սվաղ լողավազանի ներքին պատերին պատերին	քմ	169.4	2.44
	E15-325	Գիպսակարտոնե սալիկներով խողովակների երեսպատում	քմ	21.5	3.92
		<b>14.Լողավազանի հիմնակմայք</b>			
2	E1-57	III-րդ կարգի հողի քանդում էքսկավատորով, 0,5խմ շերտիկով կողայցումով	1000խմ	0.936	526.02
136	E1-961 k=1,1	III կարգի հողի լրամշակում ձեռքով	խմ	22.7	2.36
137	E11-6	Խճե հենքի պատրաստում	խմ	30.0	10.6
138	E11-11	B7,5 բետոնով հարթեցնող շերտի պատրաստում	խմ	15.0	31.0

139	E6-95	Լողավազանի հատակի և պատերի պատրաստում B20 երկաթբետոնով	խմ	127.0	57.2
140	Ի.Տ.	Ամրան A-500c	տն	9.73	391.84
141	Ի.Տ.	Ամրան A-1c	տն	0.536	411.8
137	E11-6	Ավազե հենքի պատրաստում լողավազանի պատերին կից	խմ	103.0	8.37
142	E8-27	Հիմքերի կողային բիտումային կրկնակի քսումով ջրամեկուսացում	100քմ	1.9	84.17
	E1-968	II կարգի հողի ետլիցք ձեռքով	խմ	86.5	0.9
<b>15. Ծածկոցներ</b>					
144	E9-94	Մետաղական կարկասի մոնտաժ	տն	0.345	687.04
145	E15-614	Մետաղական կոնս.յուղաներկում	100քմ	0.176	93.09
146	E10-32 Ընդ.	Տախտակամածի պատրաստում Յամ հաստ. տախտակներից	քմ	10.0	5.71
147	E12-404	Ալիկարոնդե թիթեղից ծածկոցների երեսպատում	քմ	18	18.14
148	Ի.Տ.	Ալիկարոնդե պրոֆիլներ	զմ	78.00	2.23
149	E12-280	Ցինկապատ 0,5 մմ հաստությամբ թիթեղից երեսպատում	քմ	12.6	3.964
<b>Ջրամատակարարման և կայուղու արնաքին համակարգ</b>					
		<b>I.Ջրամատակարարման արնաքին համակարգ</b>			
1	E1-65	III կարգի հողի փորում էրակ. 0,25խմ շերտով կողալցումով	1000խմ	0.078	4.82.82
2	E1-961 K=1,1	III կարգի հողի լրամշակում ձեռքով	խմ	12.2	2.36
3	E1-184	II կարգի հողի բարձում մեխ.եղանակով ա/ի վրա	1000խմ	0.026	559.7
4	C 310-5	Ավելորդ հողի հեռացում 5կմ	տն	48.6	1.43
5	E23-1	Ավազե փող-հարթեցնող շերտի պատրաստում	խմ	24.6	3.96
6	E22-397	Միացում գործող ջրագծին Ф40 խողովակով	հատ	1	3.71
7	E22-64	Ջրամատակարարման պոլիէթիլենային ուժեղ. խողով., սառը ջրի Ф40	զմ	34.5	0.87

8	E22-66	Ջրամատակարարման պոլիէթիլենային ուժեղ-խողով. սառը ջրի Փ90	զմ	98.5	2.71
9	E1-260	III կարգի հողով ետլիցք բուլբոլերով 310ձ.ու.հզր.	1000խմ	0.054	43.64
10	E1-969	III-րդ կարգի հողի ետլիցք ձեռքով	խմ	11.4	1.1
11	E46-101	Ասֆալտբետոնե շերտի քանդում	100քմ	0.054	43.73
12	E27-164-1 E27-165-1	Միջինահատիկ ասֆալտբետոնից շերտի պատրաստում 5սմ հաստ.	100քմ	0.054	398.08
13	E22-398	Միացում գործող ջրազծին Փ89 խողովակով	հաստ	1	7.13
		<b>II.Կոյուղու արտաքին համակարգ</b>			
14	E1-65	III կարգի հողի փորում էրակ. 0,25խմ շերտիով կողպցումով	1000խմ	0.049	482.82
15	E1-961 K=1,1	III կարգի հողի լրամշակում ձեռքով	խմ	6.6	2.36
16	E1-184	II կարգի հողի բարձում մեխ.եղանակով ա/ի վրա	1000խմ	0.022	559.7
17	C 310-5	Ավելորդ հողի հեռացում 5կմ	տն	41.6	1.43
18	E23-1	Ավազե փողո-հարթեցնող շերտի պատրաստում	խմ	19.6	3.96
19	E22-119	Կոյուղու պլասմասե խող.ուժեղացված 100մմ	զմ	13.0	1.2
20	E23-121	Կոյուղու պլասմասե խող.ուժեղացված 150մմ	զմ	15.0	1.7
12	E1-260	III կարգի հողով ետլիցք բուլբոլերով 310ձ.ու.հզր.	1000խմ	0.022	43.64
22	E1-969	III-րդ կարգի հողի ետլիցք ձեռքով	խմ	5.7	1.1
23	E27-164-1 E27-165-1	Միջինահատիկ ասֆալտից շերտի պատրաստում 5սմ հաստ.	100քմ	0.045	398.08
24	E23-2	Խճե հենք կոյուղու հորի տակ	խմ	0.5	6.19
25	E23-4	B15 բետոնից հենք կոյուղու հորերի տակ	խմ	0.5	28.92
26	E23-109	Փ1000 կոյ. հավաքովի դիտահորի տեղադրում	խմ	1.2	28.08
27	Ի.Տ.	Փ1000 կոյ. հավաքովի դիտահորի արժեքը	հաստ	2	44.69
28	E8-27	Կոյուղու բետոնե պատերի ջրամեկուսացում բիտումային կրկնակի քսումով	100քմ	0.07	33.11
29	E23-157	Դիտահոր. ե/բ կափարիչ թուջե մտոցով	կտ	2	84.12

Էլեկտրալուսավորություն

1	8-524-1	Ներացման բաշխիչ վահան BPY1-23-55 Y x Ո	հատ	1	62.49
